ՔՆԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ԿԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ»

Ներածություն

Պարսից ծոցի արաբական երկրների շարքում Կատարն առանձնանում է միջազգային հարաբերությունների համակարգում իր զբաղեցրած դիրքով: Անկախությունից ի վեր Կատարը ներքին և արտաքին քաղաքականության տեսանկյունից էական փոփոխությունների է ենթարկվել: Դեռևս ոչ վաղ անցյալում համաշխարհային ասպարեզում աննշան ազդեցություն ունեցող այս երկրին հաջողվեց վերջին տասնամյակների ընթացքում դառնալ արաբական աշխարհում և միջազգային հարթակում առաջադեմ և ազդեցիկ դերակատարներից մեկը:

Կատարը միշտ փորձել է վարել ճկուն և բաց արտաքին քաղաքականություն՝ շատ դեպքերում հանդես գալով որպես հակամարտությունների միջնորդ: Այս գործընթացը ներկայացվել է որպես միջազգային խաղաղության խթանմանն ուղղված քաղաքականություն, ինչն արտացոլված է սահմանադրության 7-րդ հոդվածում. «Պետության արտաքին քաղաքականությունը հիմնված է միջազգային խաղաղության և անվտանգության ամրապնդման սկզբունքի վրա՝ միջազգային վեճերի խաղաղ կարգավորման միջոցներով, այն սատարում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, չի միջամտում պետությունների ներքին գործերին և համագործակցում է խաղաղասեր ժողովուրդների հետ»:[1]

Սկսած 1995 թ.-ից իրեն պատկանող «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության միջոցով Կատարը սկսեց հանդես գալ որպես «արա-

[1] The Permanent Constitution of the State of Qatar, Al Meezan, 29th April 2003, http://www.almeezan.qa/LawPage.aspx?id=2284&language=en, accessed 01.10.2019

բական փողոցների ձայն»: Իր հարկի տակ հավաքելով արաբական իսլամական աշխարհի կրոնաքաղաքական և արմատական հայացքներով գործիչների՝ Կատարը ստացավ գաղափարական ազդեցության հզոր լծակ Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության միջոցով «Մուսուլման եղբայրները» քարոզչության հնարավորություն ստացան: Նրանք սկսեցին թափանցել ամենուր՝ բացի Կատարից:[2]

Դոհայի սերտ հարաբերությունները «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության հետ մեծապես նպաստել են Կատարի տարածաշրջանային քաղաքական կուրսի ձևավորմանը: 20-րդ դարի 80-90-ական թվականներին «քաղաքական իսլամի» գաղափարներով տոգորված «Մուսուլման եղբայրները» աշխարհի տարբեր երկրներից սերտորեն համագործակցում էին Կատարի հետ: Իր հերթին, Կատարը ջանում էր ցույց տալ իսլամական աշխարհին, որ սուննի իսլամական աշխարհի անբաժան ու ազդեցիկ մասն է: «Մուսուլման եղբայրները» շատ դեպքերում հանդես էին գալիս Ծոցի երկրների վարչակարգերի դեմ՝ շրջանցելով Կատարը[3]:

2010 թվականին սկսված «Արաբական գարունը» նոր պայմաններ ստեղծեց Դոհայի համար, որից և վերջինս փորձեց օգտվել՝ փորձելով հեռու պահել հեղափոխական ալիքը Կատարից: Դոհան մեծապես ներգրավված էր «Արաբական գարնան» ապստամբությունների և հեղափոխությունների հրահրման և դրանց տեղեկատվական հնչեղություն հաղորդելու հարցում:

Կատարը «Ալ-Ջազիրայի» միջոցով հանդես եկավ որպես հեղափոխությունների ու արաբական աշխարհում վերափոխումների կողմնակից:

---

[2] Dorsey J. M., “Wahhabism vs. Wahhabism: Qatar Challenges Saudi Arabia”, RSIS Working Paper series, №262, Singapore, 2013, p. 12, հասանելի է 02.10.2019, https://www.rsis.edu.sg/wp-content/uploads/rsis-pubs/WP262.pdf, հասանելի է 02.10.2019

[3] Львов П. П., КАТАР – карлик с амбициями гиганта или мираж в пустыне? Часть 2, Институт Ближнего Востока, 19.01.2012, http://www.iimes.ru/?p=13965, հասանելի է 01.10.2019

Կատարի դիրքորոշումը Եգիպտոսում «Արաբական գարնան» գործընթացին

Ի տարբերություն Պարսից Ծոցի մյուս երկրների, որոնց համար ժողովրդավարական ապստամբության բռնկումն ամենից խիտ բնակեցված արաբական երկրում սպառնալիք էր, Կատարը դիտում էր այն որպես հնարավորություն: Կատարի համար եգիպտական ապստամբությունների սպառնալիքի բացակայությունը մեծապես կարելի է բացատրել «Մուսուլման եղբայրների» հետ Կատարի ունեցած սերտ հարաբերություններով:

Ինչպես նշեցինք, Կատարը երբեք լարված հարաբերություններ չի ունեցել «Մուսուլման եղբայրների» հետ, ովքեր իրենց հերթին երբեք չեն վիճարկել Կատարի իշխանությունների օրինակարգությունը: Բացի այդ, Կատարի շիայական փոքրամասնությունը լավ ինտեգրված է երկրի հասարակական կյանքում: Վարչակարգի դեմ շիայական համայնքից սպառնալիք գրեթե գոյություն չի ունեցել[4]: Եգիպտական հեղափոխությանն աջակցելու արդյունքում Կատարը չենթարկվեց որևէ ներքին անկայունության, ինչը Կատարի համար ապահովեց ճկունություն արտաքին քաղաքականության մեջ:

2011-2012 թվականների ընթացքում Կատարը եգիպտական կառավարությանը նվիրաբերեց ընդհանուր առմամբ 500 մլն դոլլար՝ դրամաշնորհների տեսքով, իսկ 2012 թվականի ամռանը, երբ «Մուսուլման եղբայրների» կողմից առաջադրված Մուհամադ Մուրսին հաղթեց նախագահական ընտրություններում, Դոհան Եգիպտոսին տրամադրեց 5 մլրդ դոլլար և խոստացավ լրացուցիչ ներդրումներ կատարել՝ հասցնելով դրանք 18 մլրդ դոլլարի[5]:

---

[4] Ayub F., “What does the Gulf think about the Arab Awakening?”, Gulf Analysis (European Council on Foreign Relations), London, 10.04.2013, https://www.ecfr.eu/page/-/ECFR75_GULF_ANALYSIS_AW.pdf, հասանելի է 30.09.2019

[5] “Qatar Doubles Aid to Egypt”, by Associated Press, The New York Times, 08.01.2013, https://www.nytimes.com/2013/01/09/world/middleeast/qatar-doubles-aid-to-egypt.html, հասանելի է 01.10.2019

2013 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում Կատարը ենթարկվեց զանգվածային ճնշման եգիպտական լրատվամիջոցների կողմից՝ «Մուսուլման եղբայրներին» աջակցելու համար: Նրանք պահանջում էին Կատարից ավելի շատ նախաձեռնություններ ու ներդրումներ Եգիպտոսի ազգային անվտանգության հարցերում: Դոհան իր հերթին պնդում էր, որ Եգիպտոսին հատկացրել է 2 մլրդ դոլլար՝ նախքան Մ. Մուրսիի նախագահ ընտրվելը՝ 2013 թվականի հունիսին: Ի պաշտպանություն Կատարի՝ շեյխ Համադը մերժել էր բոլոր մեղադրանքներն ու նշել. «Մեզ հիմա մեղադրում են այն ամենի համար, ինչ տեղի է ունենում Եգիպտոսում»[6]:

Այնուամենայնիվ, Կատարի դերը չէր սահմանափակվում միայն ֆինանսական օժանդակությամբ: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսին կլիներ եգիպտական հեղափոխության դեպքերի ընթացքը, եթե չլիներ «Ալ-Ջազիրան»: Եգիպտական հեղափոխության լուսաբանումը «Ալ-Ջազիրայի» կողմից կարևոր գործիք էր Կատարի ձեռքում՝ հետմուբարաքյան Եգիպտոսում հենարան ստանալու համար: Արաբական աշխարհում «Ալ-Ջազիրայի» ազդեցության շնորհիվ Կատարը կարողացավ քողարկել իր աշխարհաքաղաքական թույլ կողմերը ու հավակնել տարածաշրջանում, և անգամ գլոբալ քաղաքականության մեջ, մեծ դերակատարության[7]: Հատկանշական է, որ Եգիպտոսում իր դիրքերն ամրապնդելու և ընդլայնելու համար «Ալ-Ջազիրան» գործարկեց իր եգիպտական կայանը (الجزيرة مباشر مصر), որն ամբողջությամբ նվիրված էր եգիպտական նորությունների լուսաբանմանը:

Թեև «Ալ-Ջազիրան» Եգիպտոսում Մուբարաքի դեմ բողոքի ցույցերը սկսեց անվանել «հեղափոխություն» արդեն իսկ հունվարի

---

[6] Khalaf R.,“Qatar gambles on Egypt power struggle”, Financial Times, 01.04.2013, https://www.ft.com/content/5235ca36-9adf-11e2-b982-00144feabdc0, հասանելի է 29.09.2019

[7] Hroub K., “Qatar and the Arab Spring”, Henrich Böll Stiftung, Beirut, 03.03.2014, https://lb.boell.org/en/2014/03/03/qatar-and-arab-spring-conflict-intl-politics, հասանելի է 29.09.2019

28-ից՝ բողոքի ալիքի բարձրացումից 3 օր անց[8]: Իրականում «Ալ-Ջազիրայի» կողմից թողարկված պատկերները կարևոր էին Եգիպտոսի իրադարձությունների գլոբալ լուսաբանման համար, հատկապես, երբ կառավարությունը որոշեց հունվարի 27-ի երեկոյան կտրել ինտերնետային կապն ու հեռախոսակապը[9]: Հունվարի 30-ին իշխանությունների կողմից փակվեց «Ալ-Ջազիրայի» եգիպտական գրասենյակը՝ հեռուստատեսության կողմից հակակառավարական ցույցերի և անվտանգության ուժերի կողմից խաղաղ ցուցարարների դեմ զենք կիրառելու տեսարանները լուսաբանելու համար[10]:

Եգիպտոսում հետմուբարաքյան ժամանակաշրջանի մասին «Ալ-Ջազիրայի» լուսաբանումը բնորոշվում էր որպես «ինստիտուցիոնալիզացված կողմնակալություն» և «դիտավորյալ խեղաթյուրում»՝ հատկապես Մուհամադ Մուրսիի կարճատև կառավարման ժամանակ, երբ «Մուսուլման եղբայրների» այդքան վեհ նկարագրությունը անհասկանալի էր և այն չէր սահմանափակվում Եգիպտոսում[11]:

Մինչև 2013 թվականը «Ալ-Ջազիրան» շարունակում էր ընկալվել Եգիպտոսի կողմից որպես թշնամի պետության՝ Կատարի լրատվական թև, որն ապահովում էր «Մուսուլման եղբայրների» քարոզչությունը[12]:

---

[8] Pintak L., “The Al Jazeera revolution”, Foreign Policy, 02.02.2011, http://www.foreignpolicy.com/articles/2011/02/02/the_al_jazeera_revolution, հասանելի է 01.05.2019

[9] Salama V., “Aljazeera’s (R)evolution?”, Jadaliyya, 20.05.2012, http://www.jadaliyya.com/pages/index/5610/al-jazeeras-(r)evolution, հասանելի է 02.10.2019

[10] “Egypt shuts down Al Jazeera bureau”, Al Jazzera, 30.01.2011, https://www.aljazeera.com/news/middleeast/2011/01/201113085252994161.html, հասանելի է 02.10.2019,

[11] Ulrichsen K., “ Small states with a big role: Qatar and UAE in the wake of the Arab Spring”, HH Sheikh Nasser al-Mohammad al-Sabah Publication Series, October 2012, p. 15 https://www.dur.ac.uk/resources/alsabah/al-SabahPaperUlrichsenno3.pdf, հասանելի է 02.10.2019

[12] Carlstrom G., “Why Egypt Hates Al Jazeera?” Foreign Policy, 19.02.2014 https://foreignpolicy.com/2014/02/19/why-egypt-hates-al-jazeera/, հասանելի է 02.10.2019

Այն ընկալումները, որ Կատարն ու «Ալ-Ջազիրան» խթանել են «Մուսուլման եղբայրների» գործունեությունը Եգիպտոսում ու աջակցել նրանց Եգիպտոսի ղեկավարման գործում՝ հետագայում չեն ընդունվել Կատարի քաղաքական վերնախավի կողմից: 2013 թվականին Լոնդոնում Կատարի արտաքին գործերի նախարար Խալիդ ալ-Աթիյան Chatham House-ում իր ելույթում պաշտպանել է Եգիպտոսի հետ ունեցած իրենց հարաբերությունները: Նա վերահաստատել է, որ Կատարը աշխատել է կառավարությունների, այլ ոչ առանձին կուսակցությունների հետ և Մերձավոր Արևելքում չի վարել պարտիզանական քաղաքականություն՝ հատկապես «Արաբական գարնան» ժամանակ: Նախարարը Եգիպտոսին նվիրված իր ելույթը եզրափակել է հետևյալ խոսքերով. «Ի վերջո, կասկածից վեր է այն, որ Եգիպտոսի կայունությունը բխում է բոլորի շահերից»[13]:

Կատարը լիբիական հեղափոխության աջակից

Մուամար Կադաֆիի դեմ հակակառավարական բողոքի գործողությունների հենց սկզբից Կատարը Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի հետ միասին առանցքային դերակատարություն է ունեցել միջազգային հանրությանը Լիբիայի վարչակարգի դեմ համախմբելու գործում: Տարիների ընթացքում Կատարը հաջողությամբ ստեղծել էր հակամարտություններում միջնորդի միջազգային հեղինակություն: Կատարը բարեկամական հարաբերություններ ուներ արաբական երկրների հետ, սակայն նույն լիբիական հեղափոխության ժամանակ Կատարի ներգրավվածությունը մատնանշեց, որ Դոհայի արտաքին քաղաքականության մեջ արմատական փոփոխություններ են տեղի ունենում: Կատարը դարձավ Լիբիայում իշխանափոխության ամենաակտիվ աջակիցներից մեկը: Դոհայի առաջարկով փետրվարի 22-ին գումարվեց Արաբական պետությունների լիգայի նիստ, որին

[13] "Qatar's Foreign Policy, HE Dr Khalid Bin Mohamed Al-Attiya, Minister of Foreign Affairs, State of Qatar", Chatham House, London, 04.12.2013, p. 7, https://www.files.ethz.ch/isn/174526/041213Qatar.pdf, հասանելի է 02.10.2019

Լիբիայի մասնակցությունը կասեցվեց: Կատարը նաև առաջին երկիրն էր, որը 2011 թվականի մարտի 28-ին պաշտոնապես ճանաչեց Լիբիայի Անցումային խորհուրդը՝ որպես Լիբիայի ժողովրդի օրինական ներկայացուցիչ: Այն նաև համաձայն էր արտահանել լիբիական նավթ ապստամբների կողմից վերահսկվող տարածքներից «Qatar Petroleum»-ի միջոցով[14]:

Լիբիական հեղափոխության մեջ Կատարի դերը որոշիչ էր մի քանի մակարդակներով: Դիվանագիտական առումով Կատարը նպաստեց Արաբական պետությունների լիգայում Քադաֆիի դեմ միջազգային ներխուժման հետ կապված հարցի շուրջ համաձայնության հաստատմանը: Կատարը նաև 2011 թվականի ապրիլին կազմակերպեց «Լիբիայի ընկերների» (արաբ՝. مجموعة أصدقاء ليبيا) առաջին հանդիպումը[15]:

Համադ բեն Ջասեմն իր համակարգված դիվանագիտական ջանքերի շնորհիվ 2011 թվականի մարտին Արաբական լիգայի միջոցով հասավ նրան, որ Լիբիան դարձավ ոչ թռիչքային գոտի[16]: Լրատվական հարթակում Լիբիայի ապստամբները ստանում էին «Ալ-Ջազիրայի» աջակցությունը: Ավելին, Կատարն օգնեց գործարկել արբանյակային ալիք «ليبيا لكل الأحرار» («Լիբիան բոլորի համար ազատ է»), որն ապստամբներին հնարավորություն ամբողջ աշխարհի առաջ բարձրաձայնելու իրենց խնդիրները: Ալիքը ստեղծվեց որպես «փափուկ ուժի» գործիք, որի նպատակն էր դիմակայել Քադաֆիի

---

[14] Niblett R., “Qatar recognises Libyan rebels after oil deals”, Aljazeera English, 28.03.2011, http://www.aljazeera.com/news/middleeast/2011/03/201132814450241767.html, հասանելի է 02.10.2019

[15] Libia Contact Group, Chair’s Statement, Doha, NATO Internship Programme, 13.04.2011, https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/pdf_2011_04/20110926_110413-Libya-Contact_-Group-Doha.pdf, հասանելի է 02.10.2019

[16] Roberts D., “Behind Qatar’s Intervention in Libya: Why Was Doha Such a Strong Supporter of the Rebels?, Foreign Affairs, 28.09.2011, https://www.foreignaffairs.com/articles/libya/2011-09-28/behind-qatars-intervention-libya, հասանելի է 03.10.2019

ռեժիմի քարոզչությանը: Կատարը նյութատեխնիկական աջակցություն ցուցաբերեց Լիբիայի ապստամբներին՝ տրամադրելով ռադիոկապեր, «Շեվրոլետ» մակնիշի ամենագնացներ և ծանր զրահատեխնիկա[17]: Դոհան նաև Բենգազիում գտնվող լիբիացի ապստամբներին տրամադրեց մեծ քանակությամբ բենզին և դիզելային վառելիք[18]:

Կատարն անցկացրեց նաև ռազմական բրիգադների վերապատրաստումներ, որոնց հանձնարարված էր պաշտպանել Արևելյան Լիբիայում գտնվող նավթային խողովակաշարերը[19]: Կատարի հատուկ նշանակության ուժերը վերապատրաստեցին Լիբիայի Ազգային ազատագրական բանակի հիմնական ուժ հանդիսացող Տրիպոլիի զինվորական ստորաբաժանումը, որը որոշիչ դեր ունեցավ Կադաֆիի բանակի դեմ հակամարտության վերջնական հաղթանակի փուլում: Ավելին՝ Դոհան ուղարկեց 6 «Միրաժ» ռազմական ինքնաթիռներ՝ միանալու 2011 թվականի մարտին ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող օդային հարձակումներին[20]:

Ինչպես Եգիպտոսում, այնպես էլ Լիբիայում Կատարն աջակցում էր իսլամիստական խմբավորումներին: Կատարի ֆինանսական և ռազմական օգնության մեծ մասն ուղղված էր «Մուսուլման եղբայրներին»՝ հատկապես ջիհադական գործիչ համարվող Աբդել Հաքիմ Բելհաջին, ով նախկինում եղել էր Լիբիայի Իսլամական պայքարի խմբավորման անդամ, ինչպես նաև ալ-Սալաբի եղբայրներին[21]: 2011 թվականի օգոստոսին, Տրիպոլիի գրավման ժամանակ,

---

[17] Soloff S., “Why the Libyans have fallen out of love with Qatar”, Time Magazine, 02.01.2012, http://content.time.com/time/world/article/0,8599,2103409,00.html, հասանելի է 03.10.2019

[18] Robinson M., "Qatari weapons reaching rebels in Libyan mountains", Reuters, 31.05.2011, https://www.reuters.com/article/us-libya-weapons/qatari-weapons-reaching-rebels-in-libyan-mountains-idUSTRE74U3C520110531, հասանելի է 03.10.2019

[19] Roberts D., նշվ. աշխ.:

[20] Նույն տեղում:

[21] Cheterian V., Libya’s rebel leader with a past, Le Monde diplomatique, 2012, https://mondediplo.com/2012/05/08libya, հասանելի է 03.10.2019

Կադաֆիի նստավայր Բաբ ալ-Ազիզիայում Ազատ Լիբիայի դրոշի կողքին ծածանվում էր նաև Կատարի դրոշը, ինչը վկայում էր ապստամբներին Կատարի անվերապահ աջակցության մասին[22]:

Կատարական գործոնը սիրիական ճգնաժամում

Կատարը միջամտեց նաև Սիրիայում ընթացող իրադարձություններին, որոնք սկսվել էին 2011 թվականի մարտի կեսերից: Չնայած այն փաստին, որ Սիրիայում հակակառավարական տրամադրությունների ձևավորման համար կային քաղաքական և սոցիալական նախադրյալներ, որոնք, ըստ էության, դրսևորվեցին «դոմինոյի էֆեկտի» շնորհիվ, սակայն շատերը հակված էին կարծելու, որ Սիրիայում վարչակարգի փոփոխության և երկրում լարվածության խորացման հարցում էական դերակատարություն ունեցան արտաքին ուժերը[23]: Այս իմաստով, Կատարն ակտիվորեն ներգրավվեց Սիրիայում սկիզբ առած հակամարտությանը՝ բազմակողմանի աջակցություն ցուցաբերելով Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հակառակորդներին, չնայած բարեկամական ու ջերմ հարաբերություններ ուներ սիրիական վարչակարգի հետ:

Կատարն իր ծրագրերն իրականացրեց Արաբական պետությունների լիգայի միջոցով՝ 2011-2012թթ. ընթացքում երկրորդ անգամ նախագահելով այս կառույցում[24]: Էմիր Համադը դարձավ առաջին արաբ առաջնորդը, ով հրապարակայնորեն աջակցեց Սիրիայում օտարերկրյա զորքերի տեղակայմանը՝ արյունահեղությունը դադա-

---

[22] Toumi H., “Raising of Qatars flag in Libya was an eerie moment”, Gulf News, 12.06.2017, https://gulfnews.com/world/gulf/qatar/raising-of-qatars-flag-in-libya-was-an-eerie-moment-1.2042345, հասանելի է 03.10.2019

[23] Փաշայան Ա., «Անկայունությունը Սիրիայում և սիրիահայ համայնքը», «Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», թիվ 3, 2011, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5811, հասանելի է 03.10.2019

[24] Batty D., Shenker J.,“Syria suspended from Arab League”, The Guardian, 2012, https://www.theguardian.com/world/2011/nov/12/syria-suspended-arab-league, հասանելի է 03.10.2019

րեցնելու նպատակով[25]: Միջազգային հարթակում քննադատություններ հնչեցին Արաբական լիգայի հասցեին այն բանի համար, որ Սիրիա ուղարկված ԱՊԼ դիտորդական խմբերին այդպես էլ չհաջողվեց օգնել այս երկրում իրավիճակի կայունացմանը[26]: 2012 թ. հունվարին Կատարի վարչապետը Բան Կի Մունի հետ հանդիպման ժամանակ ասաց խոստովանեց Սիրիայում ԱՊԼ դիտորդական առաքելության ձախողման մասին[27]: Այս համատեքստում Դոհայի դիրքորոշումը դարձավ ավելի կոշտ: Կատարը բացահայտ կոչ էր անում նախագահ Ասադին հրաժարական տալ, իսկ միջազգային հանրությանը՝ օգնել զինված ապստամբներին հնարավոր բոլոր միջոցներով, այդ թվում՝ զենքով:

Հատկանշական է, որ Կատարն այդ ամենն իրականացնում էր Լիբիայում գտնվող «Մուսուլման եղբայրների» միջոցով՝ տրամադրելով 100 մլն դոլլարի նվիրատվություն Սիրիայում կռվող ապստամբներին: Կատարը ցանկանում էր, որպեսզի ռազմական խորհուրդը համակարգեր միջազգային հանրության կողմից Սիրիայի ազգային խորհրդին տրված օգնությունները, առաջին հերթին՝ ռազմական[28]:

Այնուամենայնիվ Կատարին չհաջողվեց իրականացնել իր նպատակները Սիրիայում և ունենալ այնպիսի որոշիչ դեր, ինչպիսին Լիբիայում էր, քանի որ Սիրիայում իշխանափոխություն այդպես

---

[25] “Qatar’s Emir Suggests Sending Troops to Syria,” Al Jazeera Online, January 14, 2012, https://www.aljazeera.com/news/middleeast/2012/01/20121146422954697.html, հասանելի է 03.10.2019

[26] Muir J., Hopes and fears for Arab mission to Syria, BBC News, 27.12.2011, https://www.bbc.com/news/world-middle-east-16296135, հասանելի է 03.10.2019

[27] “Syria: Arab League monitors have made 'mistakes', says Qatari prime minister”, The Telegraph, 06.01.2012, https://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/syria/8996514/Syria-Arab-League-monitors-have-made-mistakes-says-Qatari-prime-minister.html, հասանելի է 03.10.2019

[28] Chulov M., “Qatar Crosses the Syrian Rubicon: £63m to Buy Weapons for the Rebels”, The Guardian, 01.03.2012, https://www.theguardian.com/world/2012/mar/01/syria-conflict-rebels-qatar-weapons, հասանելի է 03.10.2019

էլ տեղի չունեցավ: Շուտով Սիրիայում միջազգային և տարածաշրջանային դերակատարների ակտիվ ներգրավվում տեղի ունեցավ: Մյուս կողմից, Արաբական լիգայում Սիրիայի հարցում անհամաձայնություն կար: 2012 թ. փետրվարի 24-ին Թունիսում կայացավ «Սիրիայի ընկերներ» խմբի առաջին հանդիպումը, որի ավարտին Սաուդյան Արաբիայի պատվիրակությունը[29], ի նշան բողոքի, լքեց այն՝ միասնական դիրքորոշման հասնելու անհնարինության պատճառով[30]: Այս դեպքից հետո ԱՊԼ-ում ավելի խորացան անհամաձայնությունները հակամարտությունների հետ կապված: Երկփեղկվածությունը մեծ հարված էր ԱՊԼ-ի հեղինակությանը, և հատկապես, Կատարին, որը ցանկանում էր մասնավորապես սիրիկական խնդիրը պահել «արաբական վերահսկողության» ներքո:

Մինչև 2013 թվական Կատարը Սիրիայի ապստամբներին աջակցելու համար ծախսել է մոտ 3 մլրդ դոլլար, որը գերազանցում է մյուս բոլոր կառավարությունների ցուցաբերած աջակցություններին[31]: Սիրիայի ապստամբներին սպառազինելու համար Կատարը Լիբիայից և Արևելյան Եվրոպայից ձեռք էր բերում զենք, տեղափոխում Թուրքիա, որտեղից դրանք հասնում էին սահման՝ թուրք հետախույզների միջոցով[32]: Սիրիական ճգնաժամի լուծման հարցում Սաուդյան Արաբիայի և ԱՄԷ-ի հետ ունեցած տարաձայնությունները, «Մուսուլման եղբայրների» նկատմամբ քաղաքական մոտեցումները, ԱՄՆ-ի հետ անհամաձայնությունները, մասնավորապես

---

[29] Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար, արքայազն Սաուդ Ալ-Ֆեյսալը «Ազատ Սիրիայի» բանակի զինումը «գերազանց գաղափար» էր անվանել Թունիսում «Սիրիայի բարեկամներ» խմբի անդրանիկ հանդիպման ժամանակ:

[30] Weaver M., “Saudi Arabia Backs Arming Syrian Opposition,” The Guardian, 24.02.2012, https://www.theguardian.com/world/2012/feb/24/saudi-arabia-backs-arming-syrian-opposition, հասանելի է 03.10.2019

[31] Khalaf R., Smith A., “Qatar bankrolls Syrian revolt with cash and arms”, Financial Times, 16.05.2013, http://ig-legacy.ft.com/content/86e3f28e-be3a-11e2-bb35-00144feab7de#axzz5ojWp3uDK, հասանելի է 03.10.2019

[32] Նույն տեղում:

ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտոնյաների ճնշումները՝ կապված Սիրիա զենք ուղարկելու հետ, որոնք ցանկանում էին համոզվել, որ Դոհան չի սպառազինում ծայրահեղական ջիհադական խմբերի, բացասական ներգործություն ունեցան Կատարի հետագա դերակատարության վրա: 2013 թ. ապրիլին տարածաշրջանային և միջազգային ահազնացող ճնշումները ստիպեցին Կատարին սիրիական գործի պատասխանատվությունը ոչ պաշտոնապես հանձնել Սաուդյան Արաբիային[33]:

Կատարի քաղաքականությունը Բահրեյնում

Կատարին քննադատում էին այն բանի համար, որ նա ընտրում էր, թե որ ապստամբներին կարելի է աջակցել: Կատարը «Արաբական գարնան» շրջանակներում անվերապահ աջակցություն ցույց տվեց Բահրեյնի հակակառավարական շարժումներին ևս:

Ունենալով սոցիալական և քաղաքական որոշակի ընդհանրություններ մյուս արաբական երկրներում կատարված դեպքերի հետ՝ Բահրեյնն էականորեն տարբերվում էր: Բահրեյնը սահմանադրական միապետություն էր, շիա մեծամասնություն ունեցող պետություն: Բահրեյնը տնտեսական առումով ավելի թույլ էր Ծոցի մյուս արաբական միապետություններից, և չէր կարող Քուվեյթի և Սաուդյան Արաբիայի նման խոշոր գումարներ տրամադրել բնակչությանը՝ դժգոհությունները մեղմելու համար[34]: Պարսից ծոցի արաբական երկրներում, այդ թվում՝ Կատարում, շատ լավ հասկանում էին, որ Բահրեյնի օրինակը կարող է վարակիչ լինել: Ի պատասխան Բահրեյնի փողոցներում կազմակերպված բողոքի ցույցերի՝ ՊԾԱԵՀԽ անդամ երկրներն ընդունեցին միասնական հակահեղափոխական ռազմա-

---

[33]Khalaf R., Smith A., “How Qatar seized control of the Syrian revolution”, Financial Times, 17.05.2013, https://www.ft.com/content/f2d9bbc8-bdbc-11e2-890a-00144feab7de, հասանելի է 03.10.2019

[34] Мелкумян Е. С., “Политический скандал в королевстве Бахрейн”, Институт Ближнего Востока, 22.10.2006, http://www.iimes.ru/?p=5038, հասանելի է 03.10.2019

վարություն, որն ուներ երկու ուղղվածություն՝ ֆինանսական և տնտեսական աջակցություն և ուղղակի ռազմական միջամտություն:

2011 թվականի մարտի 10-ին Ռիյադում կայացած ՊԾԱԵՀԽ արտգործ նախարարների հանդիպման ժամանակ որոշվեց 20 մլրդ դոլար հատկացնել Բահրեյնին և Օմանին, որտեղ ընթանում էին բողոքի ցույցեր: Նրանք հայտարարեցին, որ ՊԾԱԵՀԽ անդամ երկրները դեմ են արտաքին միջամտության ցանկացած փորձ[35]: Չնայած ալ-Ջազիրան լայնորեն լուսաբանում էր Բահրեյնի դեպքերը, այնուամենայնիվ, Կատարը միացավ ՊԾԱԵՀԽ մյուս երկրներին՝ ալ-Խալիֆաներին աջակցելու գործում: Ավելի ուշ Կատարը հրապարակայնորեն հայտարարեց, որ միացել է ՊԾԱԵՀԽ զորքերին՝ Բահրեյն մտնելու ժամանակ[36]: 2011 թ. մարտի 14-ին վարչապետ Համադ բեն Ջասեմ ալ-Խալիֆան հեռախոսային հարցազրույց ունեցավ «Ալ-Ջազիրայի» հետ, որի ընթացքում ՊԾԱԵՀԽ զորքերի տեղակայումն անվանեց «օգնություն և աջակցություն գործող համաձայնագրերի շրջանակներում»[37]:

Բահրեյնի միապետական վարչակարգի հետ համերաշխ հարաբերություններ ունենալու և Բահրեյնում ծավալված ապստամբության նկատմամբ իր դիրքորոշման արդյունքում՝ Դոհան մեղադրվեց արաբական երկրների հանդեպ երկակի քաղաքականություն վարելու մեջ: Ակնհայտ է, որ Դոհան աջակցում էր արաբական հեղափոխություններին Պարսից ծոցի տարածաշրջանից դուրս[38]: Ծոցի երկրներում

---

[35] Субх М. А., “К вопросу о возможном саудовско-бахрейнском единстве”, Институт Ближнего Востока, 26.05.2012, http://www.iimes.ru/?p=14625, հասանելի է 04.10.2019

[36] “Qatar has send troops to Bahrain”, Ahram Online, 18.03.2011, http://english.ahram.org.eg/NewsContent/2/8/7988/World/Region/Qatar-has-sent-troops-to-Bahrain.aspx, հասանելի է 04.10.2019

[37] “Qatar: Al Jazeera faces tough questions as Doha backs Saudi troops in Bahrain”, Los Angeles Times, 15.03.2011, https://latimesblogs.latimes.com/babylonbeyond/2011/03/qatar-bahrain-saudi-arabia-protests-troops-security.html, հասանելի է 04.10.2019

[38] Ulrichsen K., նշվ. աշխ.:

գիտակցում էին, որ Բահրեյնում իշխող դինաստիայի հեռանալը կակտիվացնի շիաների դիրքերը տարածաշրջանում[39]:

2011 թվականի մարտի 13-ին Բահրեյնի թագավոր Համադը խնդրեց ՊԾԱԵՀԽ-ի աջակցությունը: Մարտի 14-ին մոտ 1200 սաուդցի զինվորներ զրահապատ մեքենաներով հատեցին Ֆահդ թագավորի կամուրջն ու մտան Մանամա: ԱՄԷ-ից ժամանած 800 դաշնային ոստիկանության ծառայողների հետ միասին սաուդցի զինվորները պաշտպանում էին պետական հիմնարկներն ու թագավորական պալատները զանգվածային բողոքի ցույցերի մասնակիցներից՝ թողնելով անվտանգության ուժերին կենտրոնանալ երկրում հակակառավարական բողոքի ճնշման վրա: Հայտարարվեց, որ ՊԾԱԵՀԽ անդամ երկրների միավորված ուժերը պետք է օգնեն Բահրեյնի իշխանություններին՝ պահպանել հասարակական կարգը:

Այսպիսի քաղաքականության նպատակն էր թույլ չտալ վարչակարգի փոփոխություն այդ կղզի-պետության մեջ: Հենց այս համատեքստում կարելի է դիտարկել 20 մլրդ դոլլարի հատկացումը Բահրեյնին և Օմանին՝ իրենց երկրներում ենթակառուցվածքների բարելավման, բնակարանաշինության և աշխատատեղերի ապահովման համար, ինչը աջակցություն էր առաջին հերթին ալ-Խալիֆանեին[40]:

«Արաբական գարունն» ու իսլամական արմատականության տարածումը Կատարի կողմից

«Արաբական գարնան» ալիքի ծավալման հետ միասին մուսուլման հեղինակավոր կրոնագետ-իրավագետների՝ ուլեմների

---

[39] Admon Y., Barkan L., and Savyon A., “The Bahrain Situation: Media Clashes Between the Iranian-Shi'ite Camp and the Saudi-Sunni Camp”, MEMRI, 18.03.2011, https://www.memri.org/reports/bahrain-situation-media-clashes-between-iranian-shiite-camp-and-saudi-sunni-camp, հասանելի է 05.10.2019

[40] Rieger R., “In search of stability: Saudi Arabia and the Arab Spring”, Gulf Research Senter Cambridge, 2014, p. 6-7, https://www.files.ethz.ch/isn/182104/GRM_Rieger_final__09-07-14_3405.pdf, հասանելի է 05.10.2019

շրջանում սկսվեց քննարկվել այդ ապստամբությունների օրինականության հարցը՝ իսլամական իրավունքի տեսանկյունից: Իսլամի սկզբնավորումից ի վեր կառավարչի դեմ ապստամբության օրինականության հարցը գրեթե միշտ առկա է եղել ուլեմների շրջանում, որի լուծման համար նրանք առաջնորդվել են իսլամական ավանդույթի այս կամ այն պատմական նախադեպերով[41]: Տարբեր ժամանակներում իշխանությունների հետ կապված մուսուլման կրոնագետ-իրավագետների գրակշռող մասը պնդում էր, որ իշխանությանը հնազադվելը հանդիսանում է մուսուլմանների բարոյական, քաղաքական, ինչպես նաև կրոնական պարտավորությունը, և ապստամբությունը ներկայացվում էր որպես սարսափելի հանցագործություն: Սակայն, տարիների ընթացքում հենց ուլեմների շրջանում նկատվում են ընդդիմադիր հայացքներով գործիչներ, որոնք հետագայում որոշիչ դեր ունեցան մուսուլման հասարակությանը համախմբելու հարցում[42]:

Արաբական վարչակարգերին ընդդիմադիր և քաղաքական իսլամը ներկայացնող իսլամամետ ուժերը նախքան արաբական գարունը հիմնականում գործել են վտարանդիության մեջ, ընդհատակում կամ կիսաօրինական դաշտում[43]: Վտարանդիության մեջ էր գործում նաև եգիպտացի իմամ Յուսուֆ ալ-Կարադաուին, ով համարվում է «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ոչ պաշտոնական գաղափարախոսը: Ալ-Կարադաուին 1961 թ.-ին մտավ Կատար

---

[41] Warren D., The ‘Ulamā’ and the Arab Uprisings 2011-13: Considering Yusuf al-Qaradawi, the ‘GlobalMufti,’ between the Muslim Brotherhood, the Islamic Legal Tradition, and Qatari Foreign Policy, BRISMES, 18.03.2014, էջ 4, http://www.brismes.ac.uk/nmes/archives/1305, հասանելի է 14.10.2019

[42] Fadl Kh., Rebellion and Violence in Islamic Law, Cambridge University Press, 2001, էջ 10, https://www.academia.edu/12554822/Rebellion_and_Violence_in_Islamic_Law, հասանելի է 14.10.2019

[43] Փաշայան Ա., Քաղաքական իսլամը Արաբական գարնան համատեքստում, Ժամանակակից Եվրասիա, հ. 3, Երևան, 2014, էջ 30, https://www.academia.edu/9693529/Ժամանակակից_Եվրասիա_հատոր_III_1_Երեւան_2014?auto=download, հասանելի է 14.10.2019

որպես աքսորյալ՝ Նասերի կառավարման օրոք իր ազատազրկման երկրորդ ժամանակահատվածից հետո: 1969 թ.-ին ալ-Կարադաուին ընդունեց Կատարի քաղաքացիություն Ահմադ բեն Ալի ալ-Թանիի կողմից: Կատարի թագավորական ընտանիքը առանցքային դեր ունեցավ ալ-Կարադաուիի հեղինակության բարձրացման գործում, 1977 թ.-ին նրան վստահվեց Կատարի համալսարանի Շարիաթի ֆակուլտետի դեկանի պաշտոնը: 2004 թ.-ին Դոհայում ստեղծվեց Մուսուլման աստվածաբան-գիտնականների միջազգային միությունը, որի նախագահ դարձավ Յուսուֆ ալ-Կարադաուին: Իսլամական իրավաբանական դպրոցների և ուղղությունների հեղինակավոր կրոնագետ-իրավագետների միաձայն համաձայնությամբ (իջմա) ընդունված այս որոշումը մատնանշեց ալ-Կարադաուիի գերակայության ճանաչում իրենց շրջանում[44]:

Մի շարք ուլեմների մեկնաբանմամբ՝ ժամանակակից սուննի իսլամում, երբ չկա խալիֆայություն և ոչ մի պետություն չունի համընդհանուր և անվերապահ առաջնորդություն իսլամական հարցերում, ումման գերադասում է լսել այնպիսի գործիչների, որոնք կապված չեն քաղաքական ուժերի, անդրազգային հոգևոր ցանցերի և միջազգային կազմակերպությունների հետ: Ալ-Կարադաուիին հաջողվեց ստեղծել այնպիսի կերպար, որ համապատասխանում էր այս պահանջներին: Իր անձնական հատկանիշների, «Մուսուման եղբայրների» հետ ունեցած սերտ հարաբերությունների, Մուսուլման գիտնականների միջազգային միության նախագահի իր դերի շնորհիվ ալ-Կարադաուիի կրոնական կարծիքները առանձնահատուկ կշիռ ունեն, աշխարհի շատ մուսուլմանների համար նրա արձակած ֆաթվաները[45] հանդիսանում են ճշգրիտ, օրինական և ուղղափառ համապատասխանեցում ժամանակակից իսլամական ուսմունքի պայման-

---

[44] Warren D., նշվ. աշխ., էջ 9:

[45] Ֆաթվան կրոնական կամ քաղաքացիական տարբեր իրողությունների հետ կապված իսլամական տեսակետը ներկայացող եզրահանգում է, որն ունի խորհրդակցական բնույթ և կատարման համար պարտադիր չէ:

ներին: Այնուամենայնիվ, «համաշխարհային մուֆթի»[46] դառնալու և միջազգային հանրության ուշադրությունը գրավելու համար անհրաժեշտ էր քաղաքական աջակցություն և ժամանակակից քաղաքական միջավայրում մեդիա գործիքների ակտիվ կիրառում[47]:

Երբ ապստամբությունների ալիքը հասավ Եգիպտոս, ալ-Կարադաուին սկսեց ակտիվ գործել՝ իսլամական իրավունքի տեսանկյունից բողոքի գործողությունների օրինականության հարցի լուծման համար: Նա հակադարձեց Ազհարի ուլեմների կողմից արձակված ֆաթվաներին, որոնք կոչ էին անում ապստամբներին մնալ իրենց տներում: Մուսուլման աստվածաբան-գիտնականների միջազգային միության իր աջակիցների հետ միասին՝ ալ-Կարադաուին փորձեց հայեցակարգել իսլամական իրավունքի բոլորովին նոր ուղղություն, որն անվանեց «հեղափոխության իրավագիտություն» (արաբ.՝ الفقه الثورة):[48]

2011 թ. փետրվարի 18-ին ալ-Կարադաուին առաջին անգամ վերադարձավ Կահիրե և Թահրիրի հրապարակում հանդես եկավ քարոզով, որին ներկա էր մոտ 2 մլն. մարդ: Ալ-Կարադաուին իր քարոզի ընթացքում ընդգծեց. «Մուսուլմաններն ու քրիստոնյաները, արմատականներն ու պահպանողականները, աջերն ու ձախերը դարձել են մեկ, բոլորն էլ գործում են հանուն Եգիպտոսի՝ անարդարությունից և բռնապետությունից ազատվելու համար»: Եգիպտական մամուլը սկսեց ալ-Կարադաուիին անվանել «եգիպտական Խոմեյնի»՝ իր դրական և բացասական կողմերով, ինչն այնուհետև տարածվեց նաև եվրոպական մամուլում[49]:

Իրականում ալ-Կարադաուիի վերադարձը Եգիպտոս չի եղել ինքնաբուխ, դրա համար հող էր նախապատրաստվել «Ալ Ջազիրայի»

---

[46] Մուֆթին կրոնա–իրավական հարցերով եզրահանգում (ֆաթվա) տվող անձն է:

[47] Warren D., նշվ. աշխ., էջ 5:

[48] Նույն տեղում, էջ 12:

[49] Նույն տեղում, էջ 10:

կողմից, մասնավորապես՝ ալ-Կարադաուիի հարցազրույցների, «Շարիաթն ու կյանքը» հաղորդման, ինչպես նաև Դոհայի Օմար բին ալ-Խատաբ մզկիթում անցկացվող ուրբաթօրյա աղոթքների հեռարձակման միջոցով: Ալ-Կարադաուիի՝ Կահիրե կատարած այցը նախապես մշակվել և ուղղորդվել էր Կատարի կողմից:

Եգիպտական հեղափոխությունը չարդարացրեց ժողովրդի սպասելիքները: Թույլ տրված բազմաթիվ սխալների պատճառով թե՛ Մուրսիի, թե՛ «Մուսուլման եղբայրների» հեղինակությունը սկսեց անկում ապրել: Մուբարաքի իշխանափոխությունից ի վեր սկիզբ առած ներքաղաքական անկայունությունն այդպես էլ չհաղթահարվեց: Ի վերջո, զինվորականների կազմակերպած պետական հեղաշրջման արդյունքում 2013 թ. հուլիսի 3-ին Մուհամմադ Մուրսին մոտ մեկ տարի պաշտոնավարելուց հետո հեռացվեց իշխանությունից և ձերբակալվեց[50]: Այս դեպքերին հաջորդեց ալ-Կարադաուիի միջամտությունը ֆաթվայի տեսքով, որը բուռն արձագանք ստացավ եգիպտական լրատվամիջոցների և զինվորականների աջակիցների կողմից: Ալ-Կարադաուիի համոզմամբ՝ Եգիպտոսի ժողովուրդը պետք է հավատարիմ մնար իր ընտրությանը, քանի որ այդ ընտրությունը ժողովրդավարական էին և ընդունվել էին իսլամական համայնքի հեղինակավոր համաձայնությամբ: Նա պնդեց, որ հեղաշրջման կողմնակիցները սխալվում են թե՛ սահմանադրության, թե՛ քաղաքական իշխանության օրինականության տեսանկյունից: Սահմանադրական առումով, ըստ ալ-Կարադաուիի, Մուրսին ընտրվել էր ժողովրդավարական ճանապարհով և պետք է շարունակեր իր պաշտոնավարումը մինչև ժամկետի ավարտը[51]:

Թահրիրի հրապարակի քարոզից երեք օր անց՝ փետրվարի 21-ին, «Ալ Ջազիրայի» ուղիղ եթերում տրված 23 րոպե տևողությամբ հարցազրույցի ժամանակ ալ-Կարադաուին արձակեց ֆաթվա՝ կոչ անելով սպանել Լիբիայի բռնապետ Մուամար Կադաֆիին: Կադաֆիին

---

[50] Փաշայան Ա., Քաղաքական իսլամը … էջ 35:

[51] Warren D., նշվ. աշխ, էջ 24:

սպանելու ալ-Կարադաուիի կոչը ոչ այլ ինչ էր, քան որպես մուֆթի իր պարտականությունների կատարում, որով նա բավարարեց մեծ թվով մուսուլման հավատացյալների սպասումները[52]: Ֆաթվան իրենից ներկայացնում էր նոր սոցիալական համատեքստում իսլամական ավանդույթի արդիականացման փորձ: Ալ-Կարադաուին ներկայացրեց Լիբիայում տիրող իրավիճակն ու քննադատեց վարչակարգի դեմ բողոքող քաղաքացիների նկատմամբ օդային հարվածներ հասցնելը[53]:

Չնայած նրան, որ ալ-Կարադաուիի վերադարձը Կահիրե և Կադաֆիի դեմ ուղղված նրա ֆաթվան մեծ արձագանք գտան միջազգային հանրության շրջանում՝ ալ-Կարդաուիի կերպարը, որն այդքան խնամքով մշակվել էր տարիների ընթացքում, մեծապես տուժեց Սիրիայի և Բահրեյնի դեպքերի ժամանակ: Երբ Բահրեյնում սաստկացան ցույցերն ու բռնաճնշումները, Մուսուլման աստվածաբանգիտնականների միության անդամ, հայտնի շիա կրոնագետ-իրավագետ Նաջաֆ Մուհամմադ Ալի Թասխիրին Իսլամական մազհաբների մերձեցման համաշխարհային ժողովի շրջանակներում բաց նամակով դիմեց ալ-Կարադաուիին՝ հորդորելով նրան աջակցել Բահրեյնի ապստամբներին, ինչպես դա արել էր մյուսների պարագայում: Ալ-Կարադաուին մերժեց այն և, այդ կոչին հակառակ, 2011 թ. մարտի 18-ին՝ Բահրեյնում ռազմական միջամտությունից երկու օր անց, ուրբաթօրյա քարոզի ժամանակ հայտարարեց, որ Բահրեյնում ոչ թե հեղափոխություն է, այլ՝ աղանդավորական ապստամբություն: Ալ-Կարադաուին ասել է. «Խնդիրը շիաների և սուննիների միջև է, ես դեմ չեմ շիաներին, ես դեմ եմ մոլեռանդությանը: Նրանք խաղաղ չեն, նրանք զենք են օգտագործում» [54]:

---

[52] Warren D., նշվ. աշխ, էջ 5:

[53] Muslim cleric issues fatwa on Gaddafi, The Australian, 22.02.2011, https://www.theaustralian.com.au/news/latest-news/muslim-cleric-issues-fatwa-on-gaddafi/news-story/ff2d8f4f9df77c038bf0570d77acc245, հասանելի է 15.10.2019

[54]Warren D., նշվ. աշխ., էջ 17-18:

Ինչ վերաբերում է սիրիական հակամարտությանը, ապա ալ-Կարադաուիի միջամտությունն այստեղ հակասական էր: Չնայած նրան, որ ալ-Կարադաուին խստորեն քննադատում էր սիրիական վարչակարգի արձագանքն ու Սիրիայում կատարվող բռնություն-ները՝ նա հանդես չեկավ հակամարտության խաղաղ լուծման կոչով: 2012թ.-ի փետրվարի 7-ին ալ-Կարադավին և Մուսուլման աստվածա-բան-գիտնականների միջազգային միության իր գործընկերները ար-ձակեցին նոր ֆաթվա՝ կոչ անելով սիրիական բանակի զինվորներին լքել բանակի շարքերն ու միանալ ընդդիմությանը: Բացի այդ, նրանք պահանջեցին իսլամական երկրներում ստեղծել հանձնաժողովներ, որոնք կաջակցեն Սիրիայի հեղափոխականներին այն ամենով, ինչի կարիքը նրանք կունենան: 2013 թ.-ի մայիսի 31-ին Լիբանանի հետ սահմանամերձ Քուսեյր քաղաքի համար մղվող մարտերի ժամանակ ալ-Կարադավուին իր ուրբաթօրյա քարոզի ընթացքում նշեց. «Յու-րաքանչյուր ոք, ով կարող է և գիտի, թե ինչպես պայքարել, ինչպես թուր և զենք օգտագործել, պետք է գնա Սիրիա՝ իր եղբայրներին օգ-նելու»: Ալ-Կարադաուիի զայրույթն ուղղված էր բոլոր նրանց դեմ, ովքեր աջակցում էին սիրիական վարչակարգին: Դրանց շարքում նա դատապարտեց Ռուսաստանին և անվանեց «մուսուլմանների թշնամի»՝ սիրիական վարչակարգին զինելու համար: Այնուհետև իր խոսքում ալ-Կարադաուին անդրադարձավ Սիրիայի ալավիական համայնքին, որտեղից մեծ աջակցություն էր ստանում Ասադի վարչակարգը: Ալ-Կարադաուին, մեջբերելով Իբն Թայմիայի խոսքերն, ասել է. «Նու-սայրիների մեջ կան որոշ մարդիկ, ովքեր կանգնած են ժողովրդի կող-քին, բայց նրանց մեծամասնությունն ավելի անհավատ է, քան քրիս-տոնյաներն ու հրեաները: Մենք տեսանք, թե ինչպես նրանք սկսեցին սպանել ժողովրդին»[55]: Ալ-Կարադաուին նաև նշեց Կատարի դերի կարևորության մասին, մասնավորապես, նա շնորհակալություն հայտնեց Կատարի պետությանը, էմիրին, կառավարությանն ու Կատարի ժողովրդին արաբական հեղափոխություններին՝ հատկա-

[55] Warren D., նշվ. աշխ., էջ 19:

պես սիրիական հեղափոխությանը սատարելու համար, ինչպես արել էր Լիբիայի պարագայում: Մայիսի 31-ի քարոզը հսկայական վնաս հասցրեց թե՛ ալ-Կարադաուիի կերպարին, թե՛ Կատարի միջազգային հեղինակությանը: Մուսուլման մարտիկներին ուղղված Սիրիա մեկնելու կոչը տանում էր շատ ավելի վտանգավոր ներկրոնական, աղանդավորական հակամարտության, քան վարչակարգի դեմ պայքարն էր:

Գնահատելով Կատարի դերը «Արաբական գարնան» իրադարձություններում՝ Եգիպտոսում Ռուսաստանի նախկին դեսպան Վլադիմիր Տիտորենկոն նշում է, որ Կատարի վարչակարգը բացահայտ կերպով ընդունեց այն գործողությունները, որոնք ուղղված էին Եգիպտոսը, Լիբիան և Սիրիան ոչնչացնելուն: Նախկին դեսպանի պնդմամբ Կատարի նախկին վարչապետ Համադ բեն Ջասեմը հաստատել է Դոհայի մասնակցությունը Լիբիայում Կադաֆիի վարչակարգի տապալմանը: Ինչպես մեկնաբանում է Տիտորենկոն, լիբիական վարչակարգի տապալման մեջ Կատարի ակտիվ մասնակցությունը պայմանավորված էր Դոհայի՝ լիբիական նավթի ու գազի ռեսուրսներին հասնելու հույսով: Բացի այդ, Կատարը հույս ուներ 2011 թ. Մուբարաքի տապալումից հետո Եգիպտոսի միջոցով վերահսկել արաբական աշխարհը[56]:

Ինչպես նշում է Լիբիայի Ազգային բանակի խոսնակ, գեներալ Ահմեդ ալ-Միսմարին՝ Կատարի դերը թե՛ ռազմական, թե՛ ֆինանսական, թե՛ քաղաքական առումներով դեռևս առկա է Լիբիայում: «Կատարի էմիրը հարձակվում է Լիբիայի ազգային բանակի վրա յուրաքանչյուր քաղաքական ֆորումի ժամանակ՝ ասես լիբիական բանակը Կատարի թշնամին է և պայքարում է նրա սահմաններին»,- ասել է ալ-Միսմարին[57]:

---

[56] "العربي الربيع" ,sweN hbawaB lA , فـي الـ قطري لـدورا عن يـ كـشف روسي مـسـئول 27.04.2018, https://www.albawabhnews.com/3073572?fbclid=IwAR3ML2EGMXnQayHuUq9KfRhiMRU-FpldbyieTIEZ8PPfVy7CRgjMJ5nK8hA, հասանելի է 15.10.2019

[57] يـ الـ تـ فاصـ يل.. الـمـسماري يـ فضح لـ تورطا الـ قطري والـ تركي فـ ي لـ يـ بـ يا, Sky News Arabia, 05.09.2019, https://www.skynewsarabia.com/middle-east/1280926-

Լիբիայում այժմ պահանջում են, որ Կատարի մի շարք պաշտոնյաներ պատասխանատվության ենթարկվեն և կանգնեն Միջազգային քրեական դատարանի առջև: Սա նշանակում է, որ Լիբիայի հասարակությունը գիտակցում է 2011 թ.-ին Կատարի կողմից կազմակերպված դավադրության նպատակը, այն է՝ միտումնավոր կեղծել փաստերն ու իրականությունը, տապալել պետական կառուցները, գողանալ նավթը, թալանել պետությունն ու տիրանալ երկրի արխիվին: Ըստ իրենց՝ Կատարը խարխլեց քաղաքացիական հասարակության հիմքերը և երկփեղկվածություն ու տարանջատում առաջ բերեց արաբական երկրներում[58]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուսումնասիրելով «Արաբական գարնան» շրջանակներում Դոհայի արտաքին քաղաքականությունը՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

• 2010-2011 թ. վեր արաբական հեղափոխական իրադարձությունների ընթացքում Կատարը իրականացրել է «Արաբական գարնան» միջազգային բրենդի ձևավորման հավակնոտ ռազմավարություն: Նախքան 2011 թվականը՝ Կատարը լուրջ ներդրումներ է կատարել հակամարտությունների կարգավորման գործում որպես դիվանագիտական միջնորդի իր միջազգային հեղինակության բարձրացման համար, և մեծ մասամբ դա արել է իսլամիստական ցանցի, մասնավորապես «Մուսուլման եղբայրների» միջոցով:

• Եգիպտոսում Կատարը աջակցեց «Մուսուլման եղբայրներին»: «Արաբական գարնան» դեպքերից հետո Եգիպտոսում իշխանության

-والـ تركي-الـ قطري-الـ تورطـي فضح-الـمسماري-بـ الـ تـ فاصـ يل
لـ يـ بـ يا?fbclid=IwAR2hxTegC6mdyahJSazsFInXNh0MNNL-
aZp0IVPoVGhTBlTbqMJ4K7hh2_8, հասանելի է 15.10.2019

58 قـ طر جرائـ م من نـ ماذج :لـ يـ بـ يا عـ لى الـ قطري الـ تآمر من سـ نوات ,8 ,woN aybiL ,9102.70.40
https://www.libyanow.net//2019/07/04/8-سـ نوات-من-الـ تآمر-قطري-الـ عـ لى-يـ بـ يا-لـ
Sqm7T7MIaGsT6A542RAwI=dilcbf?/ماذ-qRhM5rDKfuEXcTk308itp8d0dMHr8VIu1
5aJbw6c, հասանելի է 15.10.2019

եկան իսլամիստները: Եգիպտոսում հեղափոխությանն աջակցելու արդյունքում Կատարը չենթարկվեց որևէ ներքին անկայունության, ինչը Դոհայի համար ապահովեց ճկունություն արտաքին քաղաքականության մեջ:

• Արաբական աշխարհում և Մերձավոր Արևելքում ընդհանրապես «ալ-Ջազիրայի» ազդեցության շնորհիվ Կատարը կարողացավ քողարկել իր աշխարհաքաղաքական թույլ կողմերն ու հավակնել տարածաշրջանային, և անգամ գլոբալ քաղաքականության մեջ մեծ դերակատարության:

• Տարիների ընթացքում Կատարը հաջողությամբ ստեղծել էր հակամարտություններում միջնորդի միջազգային հեղինակություն, և ուներ բարեկամական հարաբերություններ արաբական վարչակարգերի հետ: Սակայն լիբիական հեղափոխության ժամանակ Կատարի ներգրավվածությունը մատնանշեց փոփոխություն արտաքին քաղաքականության մեջ: Կատարը և՛ դիվանագիտական, և՛ ռազմական առումով ակտիվ մասնակցություն ունեցավ Լիբիայում հեղափոխության կայացմանը: Ինչպես Եգիպտոսում, այնպես էլ Լիբիայում Կատարն աջակցում էր իսլամիստներին: Կատարի ֆինանսական և ռազմական օգնության մեծ մասն ուղղված էր «Մուսուլման եղբայրներին»:

• Կատարը միջամտեց նաև Սիրիայում ընթացող իրադարձություններին՝ բազմակողմանի աջակցություն ցուցաբերելով Սիրիայի նախագահ Բաշար Ալ-Ասադի հակառակորդներին: Այն իր ծրագրերը մեծ մասամբ իրականացնում էր Արաբական պետությունների լիգայի միջոցով՝ օգտվելով իր նախագահությունից: Սակայն, ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ ԱՊԼ-ի գործունեությունը Սիրիայում արդյունավետ չէր, ինչը մեծ հարված էր կազմակերպության հեղինակությանը:

• Տարածաշրջանային և միջազգային ճնշումների ազդեցության տակ Կատարը ստիպված եղավ Պարսից ծոցի տարածաշրջանում ոչ պաշտոնապես հրաժարվել սիրիական խնդրի պատասխանատվությունից:

• Բահրեյնի հակակառավարական հուզումների նկատմամբ Կատարի արձագանքն ու աջակցությունը Բահրեյնի իշխանություններին ապացուցեց, որ Կատարը այս պարագայում նախընտրեց Պարսից ծոցի անվտանգությունը՝ կիրառելով երկակի չափանիշներ արաբական հեղափոխությունների աջակցության հարցում:

«Արաբական գարնան» դեպքերի զարգացման հետ մեկտեղ էապես փոխվեց Կատարի վարած արտաքին քաղաքական գործունեության բնույթը՝ միջնորդությունից վերածվելով միջամտության: Կատարը չկարողացավ բարձր պահել միջնորդի իր միջազգային հեղինակությունը, որն առկա էր դեռևս «Արաբական գարնան» սկզբին:

«Արաբական գարնան» իրադարձություններում Կատարի ակտիվ մասնակցութունը պայմանավորված էր այդ գաճաճ պետության մեծ հավակնություններով, որոնց մեջ մտնում էին արաբական աշխարհի վերահսկողությունն ու տարածաշրջանի ռեսուրսների կառավարումը:

Կատարն օգտագործեց «Արաբական գարունը» որպես տարածաշրջանում ծայրահեղականության տարածման հնարավորություն: Սիրիայում Կատարի աջակցությունը «Մուսուլման եղբայրներին» և ծայրահեղական խմբավորումների զինումը հակասում էր սիրիական ճգնաժամի լուծման տեղական և միջազգային դերակատարների քաղաքականությանը, որոնք սկսել էին չվստահել և խորը կասկածանքով վերաբերվել Կատարին:

Կատարը փորձեց օգտագործել ստեղծված իրավիճակն ու ապահովել քաղաքական իսլամի ներհոսքը արաբական աշխարհ: Դոհան ցանկանում էր արաբական աշխարհը դարձնել վերահսկելի: Իհարկե, այս ամենը կանխավ մշակված և ծրագրված էր Կատարի կողմից, և այդ ծրագրի կարևոր մասն էր կազմում «Ալ Ջազիրան»: «Ալ Ջազիրայի» միջոցով Կատարը կարողացավ ազդել արաբ հասարակության տրամադրությունների վրա և հող նախապատրաստել քաղաքական իսլամի տարածման համար: Մեծ աշխատանք էր տարվել նաև իսլամական իրավական ավանդույթի տեսանկյունից «Արաբական գարնան»

ապստամբություններին օրինականություն հաղորդելու ուղղությամբ: Այս ծրագրերի իրականացման համար առանցքային կերպար էր Յուսուֆ ալ-Կարադաուին: Ալ-Կարադաուիի ֆաթվաները, սակայն, տանում էին դեպի շատ ավելի վտանգավոր ներկրոնական, աղանդավորական հակամարտության, քան վարչակարգերի դեմ պայքարն էր:

Օրեցօր շատանում են Կատարի դեմ քննադատությունները՝ տարբեր աղբյուրներից մատնանշելով Դոհայի կողմից ահաբեկչությանը սատարելու փաստերը: Կատարին դեռևս չի հաջողվի համոզել միջազգային հասարակությանը, որ նա պայքարում է ահաբեկչության դեմ, մասնավորապես, որ նա փորձում է պատասխանատվության ենթարկել Սիրիայում տեղի ունեցած ահաբեկչությունների մեղավորներին:

Կարող ենք փաստել, որ Կատարի դերն «Արաբական գարնան» իրադարձություններում բացասական էր և ապակայունացնող: Այն նպաստեց արաբական աշխարհի կազմաքանդմանն ու ազգային անվտանգության համակարգի փլուզմանը: «Արաբական գարունը», ցավոք, չարդարացրեց արաբ ժողովրդի այն սպասելիքները, որոնք կապված էին ժողովրդավարության հաստատման և տնտեսական զարգացման հետ: Այն վերածվեց աղետի, որի հետևանքները վերացնելու համար տարիներ են պետք:

QNARIK SARGSYAN
(IOS)

QATAR'S FOREIGN POLICY AND THE ARAB SPRING

Among the Arab states of the Persian Gulf Qatar has been distinguished by its flexible and open foreign policy in the system of international relations. It has always acted as a mediator during conflicts and has introduced it as a policy aimed to promote the international peace, which, according to many critics, is designed to protect only the geopolitical interests of Qatar.

The Arab Spring that spread across the Middle East in late 2010, created new conditions for Qatar . Both in diplomatic and military terms Doha was heavily involved in the uprisings and revolutions of the Arab Spring. In general, Qatar acted as a supporter of revolutions, but his reactions were transformed in different situations.

The main purpose of the research is to observe Qatar's foreign policy towards the Arab Spring and Qatar's impact on the development of the uprisings. Qatar has pursued an ambitious state-branding strategy during the Arab Spring. Before that, Qatar had made serious investments to increase its international reputation as a mediator in conflict resolution processes, and most of it was done through the Islamist network. Qatar has not been subjected to any internal instability as a result of supporting the Egyptian Revolution, which has provided flexibility in foreign policy for Qatar. The lack of the threat of Egyptian uprisings was explained by Qatar's close relationship with the "Muslim Brotherhood", which has strongly contributed to the formation of Qatar's regional political course.

Over the years, Qatar has successfully established the international reputation of a mediator, which has friendly relations with everyone. However, the involvement of Qatar during the Libyan revolution pointed to a change in foreign policy. Keeping such close ties with the Libyan rebellions was a risky maneuver, which could not succeed taking into account Gaddafi's strong resistance, but Qatar's deep diplomatic efforts gave the expected results. Qatar also interfered with the events in Syria, providing comprehensive support to the rebels. Qatar was trying to implement its programs through the Arab League, using its presidency at that time. Nevertheless, it became clear that it was not effective. Such ineffectiveness was a big blow to Qatar, which wanted to keep the Syrian case under the "Arab control".

Qatar's response and support to Bahrain's anti-government protests prove that Qatar "was choosing" the rebels to support, as a result, Doha has been accused of double standards in its policy towards the Arab uprisings.